Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
ապրիլի 25-ի N 611 -Ա որոշման

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Երևան **«**[---]**»** [---]**ի 2024թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, որի անունից հանդես է գալիս նախարար պարոն Գևորգ Պապոյանը (այսուհետ՝ «**ՀՀ**»), ով գործում է նախարարության կանոնադրության և ՀՀ Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1529-Ա որոշման հիման վրա,
և
«ՌԵՆՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող ընկերություն, պետական գրանցման համար՝ 286.110.04705, գրանցված՝ 02.10.2002թ., ՀՎՀՀ՝ 02564558, իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Փավստոս Բուզանդի փողոց, շենք 91, տարածք 72, 0010) (այսուհետ՝ «**Ռենշին**»), ում անունից հանդես է գալիս ընկերության գլխավոր տնօրեն պարոն Էդուարդ Մարությանը, ով գործում է Ռենշինի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ ՀՀ-ն և Ռենշինը միասին սույն Պայմանագրում հիշատակվելու դեպքում «**Կողմեր**», իսկ առանձին՝ «**Կողմ**»)

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1529 - Ա որոշման 2-րդ կետը և ի կատարումն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 2-րդ մասով սահմանված կարգավորումների՝ ՀՀ-ը և Ռենշինը կնքում են ծրագրի իրականացման սույն պայմանագիրը (այսուհետ՝ «**Պայմանագիր**») հետևյալի մասին.

1. ՆԱԽԱԲԱՆ

1.1. 2023 թվականի սեպտեմբերի 7-ին ՀՀ կառավարությունն ընդունել է N 1529–Ա որոշումը «Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center (WTC) կառուցելու քաղաքաշինական կառուցապատման ծրագրին հավանություն տալու և «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերության հիմնադրմանը մասնակցելու մասին», ինչպես նաև 2023 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի 1529 – Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1972 – Ա որոշումը և 2024 թվականի ապրիլի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1529-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 467–Ա որոշումը (այսուհետ միասին՝ «Որոշում»):

1.2. Որոշմամբ, որպես պետական մասնակցությամբ իրականացվող քաղաքաշինական կառուցապատման ծրագիր, հավանություն է տրվել Ռենշինի կողմից ներկայացված Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center (WTC) կառուցելու

քաղաքաշինական կառուցապատման ծրագրին (այսուհետ՝ «**Ծրագիր**»), որի իրականացնող է համարվում Ռենշինը:

1.3. Որոշմամբ Ծրագիրը ենթակա է իրականացման ՀՀ, ք. Երևան, Սարյան 22 հասցեում (մոտ 6 հազ. քառ. մ) և դրան հարակից տարածքում (շուրջ 13,200.54 քառ. մ):

1.4. Որոշմամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը լիազորվել է Ռենշինի և «Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «**Հայփոստ**») հետ համատեղ մասնակցել «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «**Ընկերություն**») հիմնադրմանը:

1.5. Որոշմամբ նաև լիազորվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը՝ Որոշման և Ծրագրի պայմանների կենսագործումն ապահովելու նպատակով իրականացնել Հայփոստի բաժնետոմսերի կառավարման հետ կապված անհրաժեշտ գործողություններ. մասնավորապես՝ ՀՀ-ի և Ռենշինի հետ մասնակցել Ընկերության հիմնադրմանը և որպես Ընկերության կանոնադրական կապիտալի ներդրում Ընկերությանը սեփականության իրավունքով փոխանցել ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Սարյան փողոց 22 (վկայական՝ N15122021-01-0282) հասցեում գտնվող անշարժ գույքը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Սույն Պայմանագրով Կողմերը սահմանում են Ծրագրի հիմնական պայմաններն, ինչպես նաև Ծրագրի բարեհաջող իրականացման և համատեղ բիզնեսավարման համար կենսական իրենց պարտականություններն ու միմյանց հանդեպ պարտավորությունները: Ի լրումն սույնի ու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դրույթների, Կողմերն ընդունում են, որ Ծրագրի իրականացմանը, ինչպես նաև Ծրագրի շրջանակներում կառուցված շինությունների շահագործմանն ու օգտագործմանը վերաբերվելու են որպես փոխշահավետ համատեղ բիզնես, ու այդ կապակցությամբ գործելու են որպես բարեխիղճ ու խոհեմ բիզնես գործընկերներ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՄՅԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ի լրումն սույն Պայմանագրով, այնպես էլ Կողմերի միջև ստորագրված կամ Կողմերի հաստատած այլ պայմանագրերով, համաձայնագրերով կամ փաստաթղթերով Ռենշինի ստանձնած պարտականությունների ու պարտավորությունների, Ռենշինի պարտականություններն են.

3.1.1. ՀՀ օրենսդրության և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի լավագույն միջազգային ստանդարտներին համապատասխան կառավարել Ծրագրի իրականացման շրջանակում կատարվող կառուցապատումը.

3.1.2. Ինչպես կառուցապատման ընթացքում, այնպես էլ դրանից հետո իրականացնել Ընկերության կառավարումը համաձայն շրջահայաց ու խոհեմ բիզնեսավարման կանոնների ու սովորույթների (sound business practices).

3.1.3. ՀՀ-ի ու Ընկերության այլ բաժնետերերի հետ համագործակցել այնպես, որ հնարավոր լինի Ծրագրի բարեհաջող իրականացումն ու Ընկերության պատշաճ կառավարումը.

3.1.4. Օտարերկրյա առաջնակարգ ներդրողների մոտ Ծրագրի նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելու ուղղությամբ գործադրել իր լավագույն ջանքերը.

3.1.5. Ընկերությունն ու կառուցապատումը կառավարել այնպես, որ կառուցապատումն ու շինությունների հետագա օգտագործումն իրականացվի շրջակա միջավայրի պահպանության ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կանոնների ներքո:

3.2. Ի լրումն սույն Պայմանագրով, այնպես էլ Կողմերի միջև ստորագրված կամ Կողմերի հաստատած այլ պայմանագրերով, համաձայնագրերով կամ փաստաթղթերով ՀՀ-ի ստանձնած պարտականությունների ու պարտավորությունների, ՀՀ-ի պարտականություններն են.

3.2.1. Ծրագրի շրջանակներում, ՀՀ կառավարության, դրա ենթակայության տակ գտնվող նախարարությունների ու այլ մարմինների իրավասությունների սահմաններում Ռենշինին ու Ընկերությանը տրամադրել այնպիսի անհրաժեշտ աջակցություն, որով հնարավոր կլինի Ծրագրով նախատեսված ամենասեղմ ժամկետներում իրականացնել Ծրագիրը: Թյուրըմբռնումներից խուսափելու համար, Կողմերը սույնով հաստատում են, որ սույն ենթակետը ՀՀ-ի համար չի ստեղծում որևէ հարկային արտոնություն, դրամաշնորհ, սուբսիդիա կամ այլ արտոնություն կամ առավելություն տալու պարտականություն:

3.2.2. Պետական գերատեսչություններին ու ՀՀ կառավարության ենթակայության կամ հսկողության տակ գտնվող մարմիններին, կազմակերպություններին ու հիմնարկներին տալ իրենց իրավասությունների շրջանակին վերաբերող հանձնարարականներ Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ թույլտվությունների, համաձայնեցումների, հաստատումների, եզրակացությունների, և այլ նմանատիպ գործընթացների մասով՝ դրանք իրականացնել և/կամ տրամադրել հնարավորինս սեղմ ժամկետներում, ինչպես նաև իրենց հայեցողական լիազորություններն իրականացնել ի նպաստ Ծրագրի անխափան ու անտեղի բյուրոկրատական քաշքշուկներից ու ձգձգումներից զերծ իրականացմանը.

3.2.3. Համայնքին ու համայնքային ենթակայության տակ գտնվող մարմիններին ու հիմնարկներին հորդորել ու քաջալերել, որ նրանք իրենց իրավասությունների շրջանակում աջակցեն Ռենշինին ու Ընկերությանը պատշաճ կերպով իրականացնել Ծրագիրն ու շահագործել Ծրագրի շրջանակներում կառուցված շինությունները.

3.2.4. Ռենշինի խնդրանքով մասնակցել այն բոլոր միջոցառումներին ու հանդիպումներին, որոնք միտված են Ծրագրի իրականացման կամ Ծրագրի շրջանակներում կառուցված շինությունների օգտագործման նկատմամբ առաջնակարգ ներդրողների, ցանցերի կամ կազմակերպությունների մոտ հետաքրքրության բարձրացմանը, ինչպես նաև սույնում նշվածի առնչությամբ ըստ անհրաժեշտության տրամադրել կամ հանձնարարել կամ միջնորդել, որ տրամադրվեն աջակցության նամակներ (support letter).

3.2.5. Անկախության երաշխիքների և իշխանությունների տարանջատման սկզբունքի պահպանման կանոններին համահունչ, ոչ գործադիր իշխանության մարմինների հետ հարաբերություններում խրախուսել այդ մարմիններին իրենց իրավասությունների շրջանակներում նպաստել Ծրագրի անխափան իրականացմանը՝ ի շահ հանրային բարօրության:

4. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. **Որոշման համաձայն Ծրագրի նկարագրությունն է՝**

4.1.1. ՀՀ, ք. Երևան, Սարյան 22 հասցեում (մոտ 6 հազ. քառ. մ) և դրան հարակից տարածքում (շուրջ 13,200.54 քառ. մ) World Trade Center (WTC) անվանմամբ (ապրանքային նշան) Ա դասի գերժամանակակից բիզնես էկոհամակարգի կառուցում.

4.1.2. Ծրագրի նախագծի մշակում JLL ընկերության կողմից, որը հիմնված է անշարժ գույքի շուկայի տարբեր սեգմենտների հետազոտության վրա.

4.1.3. Մոտ 123,000 քառ. մ շենքերի և շինությունների կառուցապատում, որոնք կներառեն գրասենյակային տարածքներ, 4 կամ 5-աստղանի տարբեր ձևաչափերի հյուրանոցներ, միջոցառումների համար նախատեսված բաղադրիչ, առևտրի սրահներ և ավտոկայանատեղի.

4.1.4. Ծրագրի կոնցեպտուալ կառուցվածք ներառում է՝

(1) կոնֆերանս դահլիճներ՝ միջազգային ֆորումների, գագաթնաժողովների և այլ միջոցառումների իրականացման համար.

(2) մշակութային հարթակ՝ համերգասրահ, ցուցասրահներ ժամանակակից արվեստագետների համար, «EXPO» սրահ.

(3) գործարար կենտրոն՝ նոր ստարտափների, նախաձեռնությունների և գործարար ակտիվություն ծավալելու համար.

(4) զբոսաշրջության զարգացմանը նպաստող գործունեության տարածքներ, ենթակառուցվածքներ.

(5) կառուցվող բարձրակարգ համալիրն օգտագործողների համար նախատեսված սպասարկման այլ ծառայությունների տարածքներ, ենթակառուցվածքներ:

4.2. **Որոշման համաձայն Ծրագրի հիմնական պայմաններն են՝**

4.2.1. Հուսալի Ծրագրի ֆինանսական ցուցանիշներ, որոնք ունակ են Ծրագրի ամբողջ ընթացքում սպասարկել վարկային միջոցները, ինչպես նաև ապահովել սեփական կապիտալի առավել բավարար վերադարձելիության մակարդակ.

4.2.2. Տարածքի տեղակայման, որակի և բաղադրիչների իրար փոխլրացնող կազմի շնորհիվ՝ երաշխավորված Ծրագրի երկարաժամկետ իրագործելիություն և մրցակցային առավելություն.

4.2.3. Ընկերությունը գրանցելուց հետո 3-ամսյա ժամկետում Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնետերերի ներդրումներ, պայմանով, որ ներդրումները կատարելու պահին Ընկերության բաժնետերերի միջև ստորագրված լինի բաժնետերերի համաձայնագիրը.

4.2.4. ՀՀ, ք. Երևան, Սարյան և ք. Երևան, Պարոնյան փողոցների միջև (Սարյան 22 հասցեում գտնվող գույքին հարակից)՝ շուրջ 13,200.54 քառ. մ մակերեսով հողամասի ձեռքբերում Ընկերության կողմից

4.2.5. Ընկերությունում ներդրվող անշարժ գույքի Ծրագրի իրականացման նպատակով օգտագործման և այդ մասով սահմանափակումների բացակայության երաշխավորում ՀՀ-ի և Հայփոստի կողմից.

4.2.6. Կողմերի կողմից այնպիսի դեպքերի շրջանակի սահմանում, որը (որոնք) կարող է (են) հիմք հանդիսանալ Ծրագրի կատարման ժամկետները հետաձգելու

և/կամ դրանում նշված ծավալների փոփոխման հարցով Ռենշինի կողմից առաջարկ ներկայացնելու համար.

4.2.7. Ռենշինին պատկանող Երևանում Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center (WTC) ապրանքային նշանի օգտագործման բոլոր իրավունքների անհատույց փոխանցում Ընկերությանը.

4.2.8. Ռենշինի կողմից Որոշման հավելվածի 15-րդ կետի համաձայն Ընկերությանը անհատույց փոխանցվում են հետևյալ նյութերը.

- շուկայի ուսումնասիրություն և Երևանում բազմաֆունկցիոնալ համալիրի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում (ՀԱԿ),
- համաշխարհային Առևտրի Կենտրոն Ասոցացիայի անդամակցության արտոնագիր,
- ծրագրի ֆինանսական մոդելներ,
- բիզնես պլաններ և ներդրումների փաստաթղթային փաթեթներ,
- ճարտարապետական ընկերությունների և խորհրդատվական ընկերությունների կողմից առաջարկվող գնանշումներ,
- շուկայի և տարածքի մանրամասն ուսումնասիրություն:

ՀՀ-ն ընդունում և հավաստում է, որ սույն կետով սահմանված նյութերը Ռենշինի կողմից Ընկերությանը փոխանցելու դեպքում կհամարվի, որ Ռենշինը պատշաճ ձևով և ամբողջապես կատարել է Որոշման հավելվածի 15-րդ կետի պահանջը:

4.3. Ծրագրի իրականացման ժամանակացույցը, բյուջեն և բնութագիրը, սահմանված են սույն Պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ով:

4.4. Ծրագրի իրականացման պայմաններ են նաև ՀՀ-ի և Ռենշինի կողմից հետևյալ պարտականությունների կատարումը.

4.4.1. ՀՀ-ն պարտավորվում է ապահովել իր և Հայփոստի կողմից (որպես Հայփոստի բաժնետեր) հետևյալ փաստաթղթերի (բոլորը միասին այսուհետ՝ **«Ծրագրի իրականացման փաստաթղթեր»**) կնքումը (ստորագրումը, հաստատումը) և դրանցով նախատեսված համապատասխանաբար իր և Հայփոստի պարտականությունների պատշաճ կատարումը.

- «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերության ստեղծման մասին պայմանագիր՝ համաձայն սույն Պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 2-ի,
- «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերեր Հայաստանի Հանրապետության, «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության, «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերության միջև բաժնետիրական համաձայնագիր՝ համաձայն սույն Պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 3-ի,
- «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրություն՝ համաձայն սույն Պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 4-ի,
- ՀՀ-ի կողմից «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում անշարժ

գույքի ներդրման պայմանագիր՝ համաձայն սույն Պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 5-ի,

- Հայփոստի կողմից «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում անշարժ գույքի ներդրման պայմանագիր՝ համաձայն սույն Պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 6-ի,
- Ծրագրի, սույն Պայմանագրի, ինչպես նաև սույն կետի նախորդ ենթակետերում նշված փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան անցկացված բաժնետերերի հիմնադիր ժողովի արդյունքում «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի հիմնադիր ժողովի արձանագրություն:

4.4.2. ՀՀ-ն պարտավորվում է ապահովել, որպեսզի Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում (այսուհետ՝ «**Ժողով**») Հայփոստը և Ընկերության խորհրդի (այսուհետ՝ **«Խորհուրդ»**) նիստերում Հայփոստի կողմից առաջադրված անդամը ցանկացած Ժողովում և Խորհրդի նիստում ցանկացած հարցի վերաբերյալ քվեարկեն այնպես, ինչպես ՀՀ-ն՝ Ժողովում, և ՀՀ-ի կողմից առաջադրված Խորհրդի անդամը՝ Խորհրդի նիստում (համապատասխանաբար): Սույն կետով սահմանված հանձնառությունն իրականացնելու համար Կողմերը պարտավորվում են համապատասխան կարգավորումներ սահմանել Ծրագրի իրականացման կիրառելի փաստաթղթ(եր)ում:

4.4.3. Ռենշինը պարտավորվում է ապահովել իր կողմից Ծրագրի իրականացման փաստաթղթերի կնքումը (ստորագրումը, հաստատումը) և դրանցով նախատեսված իր պարտականությունների պատշաճ կատարումը:

5. ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

5.1. Ծրագրի պայմանների խախտման հետևանքները սահմանվում են Ծրագրի իրականացման փաստաթղթերով:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից:

6.2. Սույն Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Սույն Պայմանագրից բխող կամ դրա առնչությամբ ծագող որևէ ոչ պայմանագրային պարտավորություն կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

6.3. Ցանկացած վեճ կամ պահանջ, որը բխում է սույն Պայմանագրից, դրա խախտումից, դադարեցումից կամ անվավերությունից կամ առնչվում է դրանց, ենթակա է լուծման բանակցությունների միջոցով, որոնք կարող են նախաձեռնվել Կողմերից որևէ մեկի կողմից և իրականացվել գործարար շրջանառության սովորույթով նախատեսված որևէ եղանակով, եթե Կողմերն առանձին բանակցության անցկացման այլ կարգ կամ եղանակ չեն նախատեսել: Բանակցությունների առավելագույն ժամկետը 30 օր է: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում բոլոր վեճերը, բացառելով ՀՀ դատարանների իրավասությունը, հանձնվելու են Միջազգային

Առևտրի Պալատի Արբիտրաժային Դատարանի (ICC International Court of Arbitration, այսուհետ՝ Արբիտրաժային դատարան) լուծմանը՝ Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Կանոններին համապատասխան: Վեճերի լուծման համար ձևավորվում է եռակազմ արբիտրաժային տրիբունալ, որում ընդգրկված արբիտրներն ընտրվում (նշանակվում) են Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Կանոններին համապատասխան:

Կողմերը պայմանավորվում են, որ

ա) Արբիտրաժային տրիբունալի որոշումները ենթակա են պարտադիր կատարման Հայաստանի Հանրապետության ու աշխարհի այլ երկրների տարածքում:

բ) Կողմերի միջև որևէ վեճի լուծման արդյունքում վարույթի, այդ թվում՝ իրավաբանական ներկայացուցչության հետ կապված Կողմի կրած ծախսերը դրվում են պարտվող Կողմի վրա:

Սույնով Կողմերը հավաստիացնում են, որ տեղեկացված են Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Կանոններին: Սույն արբիտրաժային համաձայնության նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Վեճերի քննությունն իրականացվում է ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն անգլերենն է, արբիտրաժի վայրը՝ Բրյուսել, Բելգիա:

6.4. Սույն Պայմանագիրը կազմված է հայերենով՝ 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Սույն Պայմանագրի մեկական բնօրինակ հանձնվում է ՀՀ-ին և Ռենշինին:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ, սույն Պայմանագրի Կողմերը, գործելով անձամբ կամ իրենց պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների միջոցով, վերը նշված ամսաթվին ստորագրեցին սույն Պայմանագիրը:

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ՝
Ի դեմս ՀՀ էկոնոմիկայի նախարարության

Նախարար՝ Գևորգ Պապոյան

«ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Էդուարդ Մարության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ